ԻՆՏԵՐՆԵՏԻ ԼՐԱՀՈՍՔԻՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԸ ԹՈՒՐՔԻԱ-ԵՎՐՈՄԻՈՒԹՅՈՒՆ ՍԵՄԻՆԱՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Վաշինգտոն. Հունիսի 14-ին հայկական համագումարը բարձրացրեց Թուրքիայում մարդու իրավունքների հարցը և առանձին հարցեր, որոնք վերաբերվում էին Թուրքիայի՝ Եվրոմիությանը անդամակցելու հեռանկարին և Եվրոպայի ներքին քաղաքականության քննարկումների ժամանակ Ստամբուլի հայ պատրիարքին հեռացնելու թույլտվության համար օրենք ընդունելուն:

Արևմտյան քաղաքականության կենտրոնը հրավիրեց թուրք և ամերիկացի լրագրողներին և քաղաքագետներին՝ քննարկելու համար Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցության թեր և դեմ կողմերը, գնահատելու համար, թե պե՞տք է արդյոք Թուրքիային թույլատրել լիովին անդամակցել եվրոպական ազգերի ընտանիքին: Սոներ Կագապտայը՝ Վաշինգտոնի ինստիտուտի թուրքական հետազոտությունների ծրագրի կոորդինատորը, թուրքերի լիիրավ անդամակցության ամենաաղմկոտ պաշտպանը, քննադատեց եվրոպական ազգերին, որոնք Թուրքիայի հանդեպ իրենց մոտեցումներում կրկնակի ստանդարտ են հանդես բերել:

«Եվրոպական որոշ ազգերի համար բաժակը կիսատ է, երբ հարցը վերաբերվում է Թուրքիային: Մենք նրանց բոլոր պահանջները կատարել ենք, չնայած դրան նրանք այլ կերպ են վերաբերվում մեզ: Մենք որոշ, նույնիսկ շատ դեպքերում Արևելյան Եվրոպայի երկրներից վատը չենք»,- ասաց նա:

Կրկնելով Թուրքիայի կառավարական պաշտոնյաների հաճախակի արված ակնարկները, թե Թուրքիան ներկայացրել և կիրառել է օրենքներ պաշտպանելու համար մարդու իրավունքներն ըստ Եվրոմիության «Կոպենհագենյան չափանիշների», Կագապտայն ասաց. «Մենք լիովին համաձայն ենք այն հոդվածների հետ, որոնք վերաբերվում են մարդու իրավունքների պաշտպանությանը, եկեղեցու և պետության անջատմանը և շատ այլ խնդիրներին»:

Քանի որ մի քանի անդամներ հարցեր էին բարձրացրել տնտեսական ինտեգրացիայի, ժողովրդագրական փոփոխությունների և մշակութային խնդիրների վերաբերյալ, Հայկական համագումարի հասարակական հարցերի տնօրեն Դեյվիդ Զենյանը հարցրեց Կագապտայի կարծիքը Ստամ-

բուլի հայկական պատրիարքարանին վերաբերող՝ թուրքական լրագրերի հաղորդագրությունների առնչությամբ.

«Վերջերս թուրքական "Gumhurriyet" լրագրում կարդացինք մի հաղորդագրություն այն մասին, որ Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը պահանջում է ընդունել օրենք, որը թույլ կտա ավելի շատ հսկել հայ պատրիարքի ընտրության գործընթացին և կներառի մի հոդված, որը կառավարությանն իրավունք կտա հեռացնել հայ եկեղեցու առաջնորդին: Պատկերացրեք, որ Իտալիայի խորհրդարանն ընդունում է օրենք, որը ոչ միայն ստիպում է, որ Պապը պետք է լինի Իտալիայի քաղաքացի, այլև իրեն իրավունք է վերապահում հեռացնել Պապին, եթե համարում է, որ ընտրությունն անօրինական է կամ չկայացած»,- հարցրեց Զենյանը:

Կագապտայը հարցին չպատասխանեց: Փոխարենը՝ նա վերադարձավ իր նախկին դժգոհություններին՝ կրկնելով իր կրկնակի ստանդարտների մասին մեղադրանքները:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՑԱՎԱԿՑՈՒՄ Է ՏԻԿԻՆ ՌԵՅԳԱՆԻՆ

Վաշինգտոն. Հայկական համագումարն իր «խորը վիշտը» և «սրտագին ցավակցությունն» է հայտնել տիկին Ռեյգանին և նրա ընտանիքին նրա ամուսնու՝ Ռոնալդ Ռեյգանի, ԱՄՆ-ի 40-րդ նախագահի մահվան առթիվ:

Համատեղ նամակում, որը ստորագրել են հոգաբարձուների խորհրդի տնօրեն Հրայր Հովնանյանը և տնօրենների խորհրդի նախագահ Էնքնի Պարտամյանը, համագումարը գովեստի խոսք է ասում հանգուցյալ նախագահի հասցեին ցեղասպանության ճանաչման, ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության ջատագովը լինելու համար:

Տիկին Նենսի Ռեյգանին ուղղված ցավակցական նամակում մասնավորապես ասվում է.

«Հարգելի տիկին Ռեյգան.

Հայկական համագումարի և ամերիկահայ համայնքի անունից ցանկանում ենք հայտնել մեր խոր վիշտը՝ լսելով Ձեր ամուսնու մահվան մասին: Մենք, մեր սրտագին ցավակցությունն ենք հայտնում Ձեզ և Ձեր ընտանիքին:

Հասարակությանը ծառայելու իր գործունեության ընթացքում նախագահը դրսևորեց իրեն որպես ազատության, ժողովրդավարության, մարդու արժանապատվության Ամերիկայի ամենաջերմ ու ամենավառ մարտիկներից մեկը: Ի վերջո, Ձեր ամուսինը մեծարանքի է արժանի որպես Միացյալ նահանգների միակ նախագահը, որը պաշտոնական հայտարարություններով ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Լինելով Կալիֆորնիայի նահանգապետ, նա հաճախ է հրապարակել հայտարարություններ՝ 1915թ. աղետալի իրադարձությունները ճշմարիտ կերպով բնութագրելով որպես ցեղասպանություն:

Արտաքին քաղաքականության մեջ նախագահի նշանաբանն էր «ուժով խաղաղություն», քանի որ ձգտում էր վերջ տալ սառը պատերազմին, վերամիավորել Գերմանիան, կրճատել միջուկային զենքը, ուղիներ գտնել ահաբեկչության դեմ պայքարի համար: Նրան է վերագրվում սառը պատերազմի ավարտը և Բեռլինի պատի անկումը: Ամերիկահայ համայնքը միշտ կհիշի Ձեր ամուսնու հեռատեսությունն ու ղեկավար դերը, որը նա

հանդես բերեց նախկին Խորհրդային Միության կլանած ազգերին ազատագրելու առաքելությամբ:

Իր կյանքում հանդիպած յուրաքանչյուր մարտահրավեր նախագահն ընդունում էր բարությամբ, համոզվածությամբ և լավատեսությամբ, որոնցով նա ներշնչում էր և դեռևս շարունակում է ներշնչել ամերիկացիներին: Ինչպես ողջ ազգն է ցավակցում Ձեր ընտանիքին, նույնպես մենք հավերժ կհիշենք Ձեր ամուսնուն:

Հրայր Հովհաննիսյան՝ Հոգաբարձուների խորհրդի նախագահ
Էնքնի Պարսամյան՝ Տնօրենների խորհրդի նախագահ
8 հունիսի, 2004թ.

ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՆՈՐԻՆ
ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՊԵՐ ԳԱՐՏՈՆԻՆ
9 հունիսի, 2004թ.

Հարգելի պարոն Գարտոն

Վերջերս հետաքրքրությամբ հետևում էի այն նորություններին, որոնք վերաբերվում էին հայ-ադրբեջանական հակամարտությանն ու Ղարաբաղի մասին Ձեր վերջին հայտարարություններին: Անշուշտ ցավալի է, որ վերջերս եվրոպական դիվանագետները պատմական իրողությունների հանդեպ ցուցաբերում են նույնպիսի արհամարանք, ինչպիսին երկար ժամանակ եղել էր ամերիկացիների կողմից: Ինչպես ավելի քան կես դար առաջ մարգարեաբար զուշակել էր Ջորջ Սանտայանան, այդ իրողությունների մի մասն այնպիսին են, որ դրանց մոռացության տալը թանկ կնստի աշխարհի վրա («Նրանք, ովքեր չեն կարողանում հիշել անցյալը, դատապարտված են կրկնելու այն»): Հաշվի առնելով Ղարաբաղի և Նախիջևանի պատմական անցյալն ու ժողովրդագրական պատկերը, Սովետական ազգերի ղեկավարները տարբեր առիթներով հրապարակայնորեն և պաշտոնապես 1920 և 1921 թվականներին հայտարարեցին, որ Ղարաբաղը և (1920թ. դեկտեմբերի 2-ին) Նախիջևանը Հայաստանի անքակտելի մասն են: Իսկ Սովետական Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 3-5-ը կայացած ժողովի ժամանակ, որը ղեկավարում էր Ստալինը, ձայների մեծամասնությամբ այս որոշումը հաստատվեց: Սակայն այսպիսի արդյունքից դժգոհ Ստալինը երկու օր անց ինքնակամ ու տիրաբար հրավիրում է մի նոր ժողով և մի նոր, սակայն միանգամայն անօրինական քվեարկությամբ ապահովում է (մեկ ձայնի առավելությամբ հօգուտ Ադրբեջանի) նոր որոշում: Այսպիսով, 90%-ով հայերով բնակեցված հողը ընդգրկվեց ազերիների ղեկավարած տարածաշրջանի մեջ՝ կրելով անցյալի թշնամանքի բեռն ու հետագա հնարավոր արյունալի պայթյունների վտանգը: Եվրոպան (և Ռուսաստանը նույնպես) զուցե ակամա կրկնում են բոլշևիկ Ստալինի ճակատագրական սխալը, երբ անգիտակցաբար, համառորեն պահանջում են այս անգամ սին տարածքային ամբողջականության սկզբունքի պահպանումը: Ավելին, լինելով ագրեսոր պետություն (Ադրբեջանը Ղարաբաղի դեմ սկսեց նախահարձակ գրոհ), որի հետևանքով իր իսկ ռազմական հարձակման արդյունքում պատերազմում պարտվել է, միթե՞ կարող է կամ պետք է այդ պետությունը պարգևատրվի՝ ստիպելով քաղաքական զիջում կատարել հաղթողին,

չնայած վերջինիս հաղթանակին:

Դրան շատ նման հարց է նաև Եվրոպայի վերաբերմունքը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին՝ Եվրոմիության մեջ մոտ ապագայում Թուրքիայի հնարավոր ընդունման համատեքստում: Թուրքիայի պատմությանը քաջածանոթները լավ գիտեն, որ Թուրքիայի ընդունումը (եթե դա երբևէ տեղի ունենա) անպայման հղի է դժբախտ հետևանքներով: Անշուշտ, ինքնաբերաբար կատարված այդ քայլը (Թուրքիայի ընդունումը) հնարավոր է մեծագույն ողբերգություն դառնա Եվրոպայի, նրա մշակույթի և քաղաքակրթության համար: Եվրոպայի կարճատես ղեկավարները, որոնք որոշակի մշակութային, իրավական ու քաղաքական համաձայնությունների բերումով բարձրաձայն պաշտպանում են Թուրքիայի ընդունումը Եվրոմիություն (ձևացնելով, որ այդ պաշտպանությունն անկեղծ է և լուրջ), այնպիսի մարդիկ են, որոնց համար է հենց նախատեսված Սանտայանայի նախազգուշացումը:

Այսօր Թուրքիայի ղեկավարները շատ թե քիչ նմանվում են իրենց նախնիներին՝ երիտթուրքերին, որոնք 1908թ. ամռանը երիտթուրքական հեղափոխության հետևանքով տապալելով սուլթան Համիդի բռնատիրական իշխանությունը, հպարտորեն երդվում էին ծառայել ազատության, եղբայրության և հավասարության իդեալներին: Նրանք նույնիսկ որոշ ձևական ռեֆորմներ կատարեցին՝ օսմանյան հին սահմանադրությունը ձևափոխելիս: Սակայն շատ շուտով, այսինքն՝ ինն ամիս էլ չանցած, այդ իշխանությունն իրականացրեց քսաներորդ դարի ամենասարսափելի արյունահեղություններից մեկը՝ 1909թ. Ադանայի կոտորածը, որի զոհ դարձան 25000 հայ տղամարդ, կին ու երեխա: Ինչպես նախկինում (այսինքն տասնիններորդ դարի վերջին տասնամյակներին) դատապարտում չեղավ: Քաջալերվելով՝ նույն երիտթուրքական իշխանությունները, որի բարձրագույն ղեկավարները բոլորն էլ կրթվել էին Փարիզում, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կազմակերպեցին ու իրականացրեցին քսաներորդ դարի առաջին մեծ ցեղասպանությունը հայերի նկատմամբ: Ավելի էական է այն, որ նրանց սերունդներն երեկ և այսօր համառորեն շարունակում են ժխտել այս մեծ հանցագործությունը, որ ամերիկյան դեսպան Մորգենթաուն անվանել է «ազգի սպանություն»:

Միթե՞ սա է այն Թուրքիան, որին ուզում է ընդունել Եվրոպան: Կամ միթե՞ սա է այն Թուրքիան, որի դեմ Եվրոպայի երկու նշանավոր պետական գործիչներ Ժեսկար դ'Էստենն ու Հելմուտ Շմիդտն այլոց հետ միասին շարունակում են նախազգուշացնել Եվրոմիության հետագա պատասխանատվության մասին: Թերագնահատելով կամ լիովին անտեսելով տարբերությունը էական բարեփոխումների և հապճեպորեն կազմակերպված և նպատակաուղղված դիտավորյալ կոսմետիկ բարեփոխումների միջև՝ Եվրոպայի որոշ ղեկավարներ եվրոպական արժեքների ու քաղաքակրթությանը սպառնացող աղետի առջև, հնարավոր է, որ լրջորեն վտանգի են ենթարկում եվրոպացիների հետագա սերունդների բարօրությունը:

Ի վերջո, հետաքրքիր է, թե հակառակ բոլոր պայմանականությունների, արդյո՞ք այժմ մշակվող Եվրոմիության ապագա սահմանադրության մեջ կլինի՞ որևէ պայման, որով հնարավոր լինի հանել, ժամանակավորապես դադարեցնել կամ վտարել որևէ անդամ երկրի, եթե հետագայում պարզվի, որ խախտում է անդամակցության կանոնադրությունը:

Անկեղծորեն՝ Վ. Տատրյան